

թուլի — որ ներկայ պատերազմական գործողութեանց վերայ տեղեկութիւնք քաղելոյ եւ հաղորդելոյ համար այս կողմերս եկած է, այսր ի Ս. Էջմիածին եւս հանգիպելով — Դ. հարկէր ռուբլի նուրբեց ի նպատակ ձեմարանի Մայր Աթոռոյս:

Յիշեալ աղնիւ Գաղղիացին բաւական հետաքրքիր է եւ կջանայ պատմական եւ վիճակագրական հարուստ տեղեկութիւնք հաւաքել:— Իւր թարգմանն է Ագուլեցի Պ. Յովհաննէս Ապիեան:

ՍԻՄՅԵՐԱՊՈՒՈՅ ՀԱՅՈՅ ԾԽ. ԳՊՐՈՅ

ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.

Թախանձանօք խնդրուած է հետագայի հրատարակութիւնը:

ԽԻՇՈՒՄԻՆ Եւ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐ.

Տեղոյս աղայինք, ինչպէս որ ուրիշ շատ տեղեր, չնայելով դպրոցին ուսման պարբերական միջոցին աւարտելուն, զաւակները կառնուն դպրոցէն ու եւ իցէ ժամանակ, կամ ուրիշ դպրոց կիրկեն եւ կամ կրպակի առջեւ կուտան, եւ այն ելող աշակերտաց աղբուծեան եւ կրօնի վերայ ստացած տեղեկութիւնները անկատար կ'սնան եւ սովորածներն ամբողջութիւն չունենալով թիչ ժամանակէն կ'մոռցուին: Այս պակասութեան կերպով մը առջեւ առնելու մտօր կամեցանք ուսման պարբերական միջոցը կարճացնել. երեք տարի ժամանակի վերայ բաժնեցիներ Հոգեւոր իշխանութեան մեզի տուած Հրահանգի մէջի առարկաները, որոնք աղիւսակը այս տեղեկութեան հետ կ'հրատարակուի: Եւ 1874ին Սեպտեմբեր մէկէն նոյն ծրագրով սկսեցինք շարունակել, փորձը յայտնի ցուցուց որ այս մեր արած բաժանմունքը բաւական եղաւ, միայն բնական պատմութեան առանձին դասատուութիւնը չեղաւ դաստիարակող չունենալով, բայց ընթերցանութեան ժամանակ բաւական տեղեկութիւններ տրուեցան. հաշուաւա-

լութեան վրայօր ալ ծանօթութիւն մը տրուեցաւ այս վերջին տարւոյս վերջին քառորդին մէջ, այն մտօր որ խանութի երես դնացող տղայք թիչ մը հաշիւ բռնելու տեղեկացած ըլլան. նոյնպէս եւ օրիորդք տնական ծախքերուն հաշիւները կարենան բռնել զիտնալ, բայց հարկաւ ասանց բոլորն ալ համառօտ կերպով իրրեւ սկսիւնք մը, եթէ դպրոցը ունենայ միջոց բաժին մ'ալ աւելցունելու՝ հարկաւ աւելի օգտակար կ'ըլլայ, բայց աշակերտք գոնէ 8 կամ 10 անձինք մնացած պիտի ըլլան:

Ահա երեք տարուայ բաժնուած ծրագրին իւրաքանչիւր տարւոյն

Աղիւսակներ.

ԱՄՍԱԳԻՐ ԿԱՐԴԻ, ԿԱՐԵՒ Եւ ԿԱՐԵՒ.

1. Այրուրենէն սկսեալ կարդալ որչափ եւ կարելի է անսխալ, եւ զրել նոյնպէս անսխալ բայց ծանր եւ զրաժնուն վայելչութեանը չնայելով:

2. Ուղղագրութեան բանի մը պարզ եւ հասարակ կանոնները սովորեցնել եւ ուղղագրել նախ բառեր եւ ապա խօսքեր:

3. Կարդացածին հարցմամբ պատմել տալ որչափ եւ կարելի լինի, որով կ'սովորին եւ հասկընալու կերպով կարդալ:

4. Մտաւոր թուարանութիւն, ամենապարզ խնդիրներ լուծել եւ յետոյ ճանաչել տալ թէ ինչ գործողութեամբ է իրենց լուծածը:

5. Համրիչի վերայ թիւեր կարդալ եւ համրիչ ձգել բայց ծանր: Իսկ յետ կէս տարւոյն հազարաւոր թիւեր կարդալ եւ գրել:

6. Ռուսերէն կարդալ եւ գրել այրուրենէն սկսեալ վերի ընթացքով:

ԱՐԵՐԵՐ ԿԱՐԻ, ԴՋԻՆ Եւ ԴՋԻՆ.

1. Հայերէն ընթերցանութիւն առողանութեամբ՝ ոչ այնչափ ցած եւ ոչ այնչափ ծանր. բռն, ստորակետ, միջակէտ եւ վերջակետներուն ներգործութիւնները զիտնալ եւ ըստ այնմ կարդալ:

2. Ուղղագրութեան կանոններ եւ ուղղագրութիւն, եւ գերականութեան բանի մը պարզ կանոններ:

3. Կարդացածնին պատմել սկիզբէն հարցմամբ, իսկ յետ կէս տարւոյն սկսել առանց հարցման պատմել, եւ երբեմն պատմածնին զրել որչափ որ կարենան:

4. Զեռագիր կարգալու կրթութիւն:

5. Կրօնագիտութիւն, Աղօթք եւ Քրիստոնէական վարդապետութեան կէսը, Գերապատիւ Գարրիէլ Արքեպիսկոպոսի հեղինակութեամբը նոր տպուած գրքէն:

6. Սուրբ գրոց պատմութիւն, աշխարհիս ստեղծմանէն մինչեւ ցգալուստ Քրիստոսի, պատկերներով:

7. Թուարանութիւն, նախ համբել, թուանշաններ զրել եւ կարդալ. ապա ամենապարզ խնդիրներ լուծել:

8. Ռուսերէն ընթերցանութիւն առողանութեամբ վերի ընթացքով:

Երրորդ Կարգի Էլէմէնթար:

1. Հայերէն ընթերցանութիւն առողանութեամբ, ոչ այնչափ շուտ եւ ոչ այնչափ բարձր՝ առանց եղանակի խօսակցութեան ձեռով:

2. Ուղղագրութիւն եւ այժմեան տեղւոյս լեզուին համեմատ քերականութեան կանոններ լուծել, բառերը ճանաչել, հոլովները եւ խոնարհումները գիտնալ, բայց առանց դասագրքի Պ. Մենինի ընթացքով:

3. Իրենք իրենց որչափ եւ կարելի է առանց քերականական սխալի պատմական բանք զրել:

4. Գրաբառի ընթերցանութեան կրթութիւն եւ Աւետարանի խօսքերը պատմել իրենց լեզուովը:

5. Նոր Կտակարանի պատմութիւն, մինչեւ ցհամբարծումն Քրիստոսի եւ առաքելոց քանի մը զլիսաւոր գործերը պատկերներով:

6. Հայոց պատմութիւն Հայկէն մինչեւ ցվերջ Ռուբինեանց տէրութեան՝ դասատետրով համառօտ:

7. Կրօնագիտութիւն, Քրիստոնէական վարդապետութեան մնացեալ կէսը եւ Եկեղեցական պատմութեան զլիսաւոր գիտելիքները:

8. Թուարանութեան չորս գործողութեան խնդիրներ լուծել եւ տարւոյն վերջին քառորդին հաշուեկալութեան համառօտ տեղեկութիւն:

9. Ռուսերէն ընթերցանութիւն, առակներ քերան, եւ լեզուին ամենահարկաւոր կանոնները, ու կարդացածնին պատմել որչափ որ կարելի է:

Ի Սէֆէրապօլ.

Ն. Զ. ԹՕՓՃԵԱՆՑ.

Կ Տ Ա Կ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՐՎԱՐԴԵԱՆՅԻ.

ԽՖԻԿԻՆ-ԷԼԵՄԵՆԹԱՐԱՐԻՆ.

ՅԱստրախան վերաբնակեալ Ղլարեցի հայազգի Յարութիւն Ե. Փուրվարդեանց՝ կտակագրով ի 1853 ամի աւանդեալ էր յանուն Աստրախանայ Հայոց Ուսումնարանի 44500 ռուբլի գրամս: Ըստ տնօրէնութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ ի քանալ զծխական հոգեւոր երկսեռի Գպրոցս Հայոց յԱստրախան քաղաքի՝ Հոգաբարձութիւն Գպրոցաց տնօրէնութեամբ Հոգեւոր Իշխանութեան ստացաւ ի կտակակատարէ հանդուցելոյն ի Պարոն Աբրահամ Փասոյեանցէ նախ՝ ի զանաշան ժամանակս ընդ ձեռն թեմական Հոգեւոր Ատենի 41800 ռուբլիս, երկրորդ՝ ըստ լուծման Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան զմի քաշէն տուն 6000 ռուբլի արժողութեամբ հանդերձ կալուածագրով, ուր պարունակի Հոգեւոր Գպրոց Օրիորդաց, երրորդ՝ զհաշուեցուցակ ծախուց զուժարի, արարելոց համաձայնութեամբ Հոգաբարձութեան ընդ ձեռն կտակակատար Պարոն Փասոյեանցի ի վերանորոգութիւն յիշեալ տան առ զուժար 326 ռուբլի 52 կոպէկի, եւ չորրորդ՝ ի հաշիւ նոյն կտակաւանդ զուժարի զմի Դրամատոմսակ Աստրախանայ Քաղաքային Հասարակական Դրամատան, տուեալ մշտնջենաւոր ժամանակաւ յանուն Հոգեւոր Ծխական Դըպրոցի ի 44 յունիսի 1876 ամի համարաւ 500՝ զուժարաւ 3610 ռուբլի:

Ըստ այսոցիկ՝ Հոգաբարձութիւն Գպրոցաց համաձայն կտակագրի Ղլարեցի Յարութիւնի Փուրվարդեանց յօրինելոյ ի 1853, եւ հաստատելոյ յԱստրախանայ Պալատան Քրէական Քաղաքական դատարանի ի 1854 ամի, ստացաւ ի կտակակատարէ հանգուցելոյն յԱստրախանցի Աբրահամ Գրիգորեանէ պարոն Փասոյեանց զկտակաւանդ 4500 ռուբլի գրամս հանդերձ անցեալ 7256 ռուբլի 52 կոպէկ տոկոսեօք, ընդ ամենն տասն եւ մի հազար եօթն հարիւր երեսուն եւ վեց ռուբլի յիսուն եւ երկու կոպէկ արծաթի, յօգուտ եւ ի պէտս պահպանութեան Հոգեւոր Ծխական երկուց սեռից Գպրոցաց